

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը 2018/2019 ուսումնական տարվա համար հայտարարում է ԲՈՒՀ-ի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (վճարովի) հեռակա ուսուցման մագիստրատուրայի ընդունելություն՝ հետևյալ կրթական ծրագրերով.

Ծածկագիրը	Մասնագիտությունը	Տեղերը	Ուսման վարձ (դրամ)
031101.04.7	Միջազգային տնտեսական հարաբերություններ	20	470 000
031101.13.7	Ձեռնարկատիրական գործունեություն	20	470 000
031101.15.7	Տնտեսության պետական կարգավորում	20	470 000
041101.01.7	Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)	25	470 000
041101.03.7	Աուդիտ	25	470 000
041201.02.7	Ապահովագրական գործ	20	420 000
041201.03.7	Հանրային ֆինանսներ	20	470 000
041201.04.7	Կորպորատիվ ֆինանսներ	20	470 000
041201.06.7	Բանկային գործունեության կազմակերպում	20	470 000
041301.03.7	Պետական և մունիցիպալ կառավարում	20	470 000
041301.04.7	Գործարար վարչարարություն /կառավարում/	20	470 000
041301.11.7	Զբոսաշրջության կառավարում	20	470 000
041301.15.7	Կառավարման տեղեկատվական համակարգեր	20	370 000
041401.03.7	Մարքեթինգային հետազոտություններ	15	420 000
041401.04.7	Մարքեթինգային հաղորդակցություններ	15	420 000
041401.05.7	Կոմերցիա	15	370 000
041401.06.7	Բիզնեսի կազմակերպում	15	370 000
ԸՆԴԱՄԵՆԸ		330	

ՀՊՏՀ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԵՌԱԿԱ ՌԻՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐՈՎ 2018/2019 ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ
ՎԱՐՁԱՉԱՓԵՐԸ

Ծածկագիրը	Մասնագիտությունը	Տեղերը	Ուսման վարձ (դրամ)
041101.01.7	Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)	20	420 000
041201.03.7	Հանրային ֆինանսներ	20	420 000
ԸՆԴԱՄԵՆԸ		40	

ՀՊՏՀ հեռակա ուսուցմամբ մագիստրատուրա մրցութային կարգով (ըստ նախորդ կրթական աստիճանի դիպլոմի հավելվածում գրանցված ուսումնառության բոլոր կիսամյակների արդյունքում կուտակված միջին որակական գնահատականի՝ ՄՈԳ-ի) կարող են ընդունվել ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների առնվազն բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձինք:

Հեռակա մագիստրատուրայում ուսուցումն իրականացվում է բացառապես վճարովի հիմունքներով, ուսման տևողությունը 2.5 տարի է (5 կիսամյակ):

Ընդունելությունն անցկացվում է ըստ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (վճարովի) ուսուցման տեղերի:

Հեռակա մագիստրատուրա ընդունվելու համար **ՀՊՏՀ համապատասխան որակավորում չունեցող կամ այլ ԲՈՒՀ-երի նույն մասնագիտության բակալավրիատի շրջանավարտ չհանդիսացող** դիմորդները հանձնում են **շեմային քննություն** համապատասխան մասնագիտության բակալավրիական ծրագրի հարցաշարերով (հարցաշարերը՝ asue.am կայքում):

Սահմանված տեղերի շրջանակներում, **առանց մասնագիտական շեմային քննության**, ընդունելության մրցույթին կարող են մասնակցել **համապատասխան**

որակավորման¹ ՀՊՏՀ և այլ ԲՈւՀ-երի նույն մասնագիտության բակալավրիատի շրջանավարտները:

Ըստ ՄՈԳ-երի ընդունելության մրցույթին սահմանված տեղերի շրջանակներում մասնակցում են համապատասխան որակավորման ՀՊՏՀ և այլ ԲՈւՀ-երի նույն մասնագիտության բակալավրիատի շրջանավարտները, ՀՊՏՀ համապատասխան որակավորում չունեցող կամ այլ ԲՈւՀ-երի նույն մասնագիտության բակալավրիատի շրջանավարտ չհանդիսացող այն դիմորդները, **ովքեր դրական գնահատական են ստացել շեմային քննությունից:**

Դիմորդների հավասար ՄՈԳ-երի պարագայում առաջնահերթության կարգով հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ չափանիշները.

- գերազանցության դիպլոմի առկայությունը,
- ավարտական աշխատանքի պաշտպանությունից ստացած միավորը,
- մասնագիտական և մասնագիտացման առարկաներից ստացած միավորների

գումարը:

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են հունիսի 11-ից մինչև սեպտեմբերի 25-ը ներառյալ, ժամը 9:00-17:30: Շեմային քննությունը տեղի կունենա սեպտեմբերի 26-ին, ժամը 14:30-ին:

¹ Համալսարանում իրականացվող կրթական ծրագրերով տրվում է երեք որակավորում՝ տնտեսագիտության բակալավր/մագիստրոս, կառավարման բակալավր/մագիստրոս և վիճակագրության բակալավր/մագիստրոս: Մագիստրատուրայի ընդունելության ժամանակ **տնտեսագիտության որակավորմամբ** իրականացվող կրթական ծրագրերը բաժանվում են **երկու խմբի: Առաջին խմբի** մեջ մտնում են՝ «Տեսական տնտեսագիտության», «Մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում», «Միջազգային տնտեսական հարաբերություններ», «Բնօգտագործման տնտեսագիտություն», «Աշխատանքի տնտեսագիտություն», «Ձեռնակությունների տնտեսագիտություն և կառավարում» և «Մաթեմատիկական մեթոդներ և մոդելները տնտեսագիտության մեջ» բակալավրիական կրթական ծրագրերը, իսկ **երկրորդ խմբի** մեջ՝ «Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)» և «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» բակալավրիական կրթական ծրագրերը:

Կառավարման որակավորմամբ իրականացվող բակալավրիական կրթական ծրագրերն են՝ «Կառավարում (ըստ ոլորտի)», «Պետական և մունիցիպալ կառավարում», «Հակաճգնաժամային կառավարում», «Զբոսաշրջության կառավարում», «Կառավարման տեղեկատվական համակարգեր», «Հողագույքային հարաբերություններ», «Շուկայագիտություն (մարքեթինգ)», «Կոմերցիա», «Բիզնեսի կազմակերպում», «Ապրանքագիտություն և ապրանքի որակի փորձաքննություն»:

Վիճակագրության որակավորմամբ իրականացվող բակալավրիական կրթական ծրագիրն է «Վիճակագրություն»-ը:

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

- մագիստրատուրայի ընդունելության դիմում-հայտ (լրացվում է տեղում),
- բարձրագույն կրթության դիպլոմի և դրա հավելվածի բնագրերն ու պատճենները

կամ ակադեմիական տեղեկանքը (տվյալ տարվա այն շրջանավարտների դեպքում, ովքեր դեռ չեն ստացել ավարտական փաստաթուղթը),

- անձնագրի բնօրինակը և պատճենը,
- 3 x 4 սմ չափսի երեք լուսանկար,
- զինվորական գրքույկի (առկայության դեպքում) կամ կցագրման վկայականի բնօրինակը և պատճենը,

• ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության, ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի երեխա լինելու, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դառնալու, առանց ծնողական խնամքի մնացած՝ մինչև 23 տարեկան երեխա լինելու մասին):

Հեռակա ուսուցմամբ մագիստրատուրա ընդունված դիմորդների վերջնական հրամանագրումը կատարվում է առաջին կիսամյակի ուսման վարձի վճարման թույլտվություն ստանալու պահից մինչև հոկտեմբերի 26-ը՝ կիսամյակի ուսման վարձը վճարելու և վճարման կտրոնը ընդունող հանձնաժողով ներկայացնելու դեպքում:

Դիմում-հայտում դիմորդը կարող է հայտագրել 2 (երկու) մագիստրոսական կրթական ծրագիր՝ ըստ նախապատվության: Հայտում նշված առաջին ծրագրի չբացվելու կամ մրցույթից դուրս մնալու դեպքում դիմորդը մասնակցում է երկրորդ ծրագրի մրցույթին: Ծրագիրը չի բացվում, եթե ուսանողների թիվը չի համապատասխանում ՀՊՏՀ գիտական խորհրդի 2016 թվականի հունիսի 22-ի N 9 նիստով սահմանված պահանջին: Եթե դիմորդը չի ընդունվում իր հայտագրած կրթական ծրագրերից որևէ մեկում կամ հայտագրած ծրագիրը չի բացվում, ապա ընդունող հանձնաժողովը կարող է նրան առաջարկել որևէ այլ կրթական ծրագիր, որտեղ առկա են թափուր տեղեր՝ տվյալ կրթական

ծրագրի մուտքային պահանջները բավարարելու կամ շեմային քննությունը հանձնելու պայմանով:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՊՏՀ-ում Երևանում՝ Նալբանդյան 128 և Գյումրիում՝ Վ. Սարգսյան 32 հասցեներով:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 593-473 հեռախոսահամարով կամ այցելել ՀՊՏՀ պաշտոնական էջ՝ www.asue.am էլեկտրոնային հասցեով: